Հայրապետական օրհնութեամբ ու քրիստոնեական ջերմ սիրով կ'ողջունենք Հայաստանի Հանրապետութեան վսեմաշուք նախագահ տիար Սերժ Սարգսեանը: Եղբայրական ջերմ սիրով կ'ողջունենք Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հայրապետական օրհնութեամբ ու հայրական ջերմ սիրով կ'ողջունենք Հայ Եկեղեցւոյ Գերաշնորհ արքեպիսկոպոսներն ու եպիսկոպոսները, որոնք հաւաքուած են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ հրաւերով երկու Վեհափառ Հայրապետներուն, անոնց օրհնութեամբ ու ներկայութեամբ միասնաբար աղօթելու, միասնաբար խորհրդակցելու եւ որոնելու Հայ Եկեղեցին դէպի ներքին բարեկարգութիւն առաջնորդող ազդու միջոցներն ու ճիշդ ճամբաները:

Արդարեւ, պատմական կարելի է որակել եպիսկոպոսաց ներկայ ժողովը. պատմական՝ մեր Եկեղեցւոյ ամբողջականութիւնը ներկայացնող իր հանգամանքով, պատմական՝ բազմազան ու այլազան մարտահրաւերներով լեցուն մեր Եկեղեցւոյ ու ժողովուրդի կեանքի ներկայ վճռական հանգրուանին իր կայացումով, պատմական՝ մանաւանդ իր առաջադրած վեհ նպատակով: Արդ, այս պատասխանատուութեամբ ու նախանձախնդրութեամբ հարկ է մօտենալ ներկայ ժողովին: Մեր Եկեղեցւոյ ու ժողովուրդի հաւաքական կեանքին մէջ փայլուն նոր էջ մը բանալու յանձնառութեամբ հարկ է մասնակից դառնալ եպիսկոպոսաց ժողովի աշխատանքներուն:



Եօթերորդ դարուն Ներսէս Գ Իշխանցի Կաթողիկոս Վարդապառնի տօնին խորապէս կը վրդովի ի տես Եկեղեցիէն ներս կատարուող աններդաշնակ ծիսակատարութեան: Այս դառն փորձառութիւնը Հայրապետը կը մղէ գումարելու Դուինի երկրորդ ժողովը 648-ին եւ հաստատելու շարք մը կանոններ Հայ Եկեղեցւոյ ծիսական, բարոյական ու դաւանաբանական մարգերուն առնչուած: Եթէ այսօր Ներսէս Գ Իշխանցի Կաթողիկոսը, երկինքէն իջնելով, շրջէր մեր Եկեղեցիներէն ներս, վստահաբար դարձեալ պիտի ընդվզէր՝ տեսնելով մեր Եկեղեցւոյ պարզած վատառողջ վիճակը...

Պատմութեան ընթացքին մեր հայրապետներուն կողմէ եղան բազմաթիւ նախաձեռնութիւն-

ներ՝ Հայ Եկեղեցին բարեկարգելու առաջնորդող: Մեր Եկեղեցւոյ պատմութիւնը լեցուն է Եկեղեցւոյ կեանքի զանազան բնագաւառներուն առնչուած կանոններով, սկզբունքներով եւ ուսուցումներով: Սակայն այնքան արմատական ու արագ փոփոխութիւններ տեղի ունեցան ընկերութեան կեանքին մէջ, որ այսօր, փաստօրէն հսկայ վիճակ գոյացած է մեր հայրերու հաստատած կանոններուն ու ներկայ ժամանակներու մտահոգութիւններուն ու մարտահրաւերներուն միջեւ: Մեր պատմութեան վերջին դարերու պայմանները, երբ մեր ժողովուրդին ու հայրենիքին գոյութիւնը խնդրող առարկայ դարձած էր, չներեցին, որ մեր Եկեղեցին լծուի բարեկարգչական ծրագրուած ու համապարփակ աշխատանքի: Այսօր, հազար փառք կու տանք Աստուծոյ, որ մեզի այս եզակի պատեհութիւնն ընծայեց երկու Վեհափառ Հայրապետներուն նախաձեռնութեամբ ու առաջնորդութեամբ եւ մեր Եկեղեցւոյ եպիսկոպոսներուն մասնակցութեամբ լծուելու ծիսական բարեկարգութեան այնքան հրամայական գործընթացքին:

Ի՞նչ կը հասկնանք «բարեկարգութիւն» ըսելով.- սոսկ անցեալի աւանդութեանց վերականգնումը, մեր Եկեղեցւոյ ծիսական կարգին վերադասաւորումը կամ կրճատումը, լոկ լեզուի փոփոխութիւնը, եւ կամ ծիսական նոր համակարգի մը հաստատումը՝ մեր կեանքին ներկայ դրուածքին պատշաճող: Հարցադրումներ, որոնք պէտք է կատարուին իրապաշտ մօտեցու-

տարածքներուն, բնագաւառներուն ու արտայայտութիւններուն մէջ, ներառեալ Եկեղեցւոյ աստուածաբանական մտածողութիւնը ու դաւանաբանական ուսուցումները, ծեսը կեդրոնական տեղ ու առանցքային դեր ունի:

Անհրաժեշտ է սակայն, որ մեր Եկեղեցւոյ ծիսական կեանքը բարեկարգելու ձգտող մեր աշխա-



տանքը կատարուի մեր Եկեղեցւոյ ինքնահասկացողութեան խորքին վրայ: Արդարեւ, ոմանք Հայ Եկեղեցին կը նկատեն լոկ հոգեւոր կառոյց, ուրիշներ՝ ազգային հաստատութիւն: Աշխարհականներու գործօն ներկայութիւնը մեր Եկեղեցիէն ներս ոմանք տարօրինակ կը գտնեն, ուրիշներ՝ բնական. ոմանք հոգեւորականներու ազդու դերակատարութիւնը կը նկատեն դրական, ուրիշներ՝ անընդունելի: Այս հակադիր մօտեցումները տեսական կամ պարագայական չեն: Անոնք սերտօրէն առնչուած են մեր Եկեղեցւոյ պատմական զարգացման հոլովոյթին: Այսպէս, Արեւելեան Հայաստանի մէջ, Պոլսի հաստատումով եւ հետագայ քաղաքական պայմաններու յառաջացումով, մեր Եկեղեցւոյ կեանքին ու առաքելութեան մէջ հոգեւորականը գրաւեց առանցքային տեղ: Իսկ Կիլիկիոյ մէջ, Ազգ. Սահմանադրութեան հաստատումով եւ սփիւռքեան բոլորովին տարբեր պայմաններու ստեղծումով Եկեղեցւոյ կեանքին մէջ աշխարհական դաւր դարձաւ կարեւոր ներկայութիւն:

Հայ Եկեղեցւոյ ինքնահասկացողութեան այս տարբեր շեշտաւորումները, որոնք նաեւ ձեւաւորեցին տարբեր գործելակերպեր ու մտածելակերպեր, անհրաժեշտ է, որ ներդաշնակուին պատմութեան ընթացքին կազմաւորուած մեր Եկեղեցւոյ հարազատ ինքնաճանաչման հետ, որ իր մէջ կը պարփակէր մեր ժողովուրդի ամբողջականութիւնը՝ հոգեւորականը ու աշխարհականը իրենց իւրայատուկ դերերով: Այս իրողութենէն մեկնելով՝ Հայ Եկեղեցւոյ բարեկարգչական բոլոր ժողովներուն, հոգեւորականներու կարգին իրենց մասնակցութիւնը բերած են նաեւ մտաւորականներ, նախարարներ ու նոյնիսկ՝ զօրավարներ: Հետեւաբար, մեր ժողովուրդի զաւակներուն մասնակցութիւնը ներկայ գործընթացքին, յատկապէս երբ մեր ժողովուրդին կեանքին հետ անմիջականօրէն աղերս ունեցող

հարցերու քննարկումը կը կատարուի, կը նկատենք հրամայական: Մեր ժողովուրդն իր Եկեղեցին յուզող հարցերուն նկատմամբ ըսելիք եւ ընելիք ունի, պէտ է ունենայ:

Մեր խորհրդակցութիւններուն ընթացքին անհրաժեշտ է նաեւ նկատի ունենալ հետեւեալ կարեւոր երեւոյթը: Պայմաններու

րուն, նոյնիսկ աշխարհական մասնագէտներուն՝ համաձայն քննարկուելիք նիւթերու բնոյթին ու տարողութեան: Յիշեալ գործընթացքին հիմնական աշխատանքը պէտք է կատարուի մասնագիտական յանձնախումբերու կողմէ, ուր ուսումնասիրութիւններու ու քննարկումներու կողքին յատուկ տեղ պէտք է յատկացուի մեզ շրջապատող ներկայ պայմաններէն եկող մտահոգութիւններուն ու մարտահրաւերներուն:

2) Անհրաժեշտ է հաւատարիմ մնալ Հայ Եկեղեցւոյ անցեալի աւանդութիւններուն՝ միաժամանակ զանոնք դարձնելով համահունչ ներկայ ժամանակներուն: Աւանդութիւնը Եկեղեցւոյ կեանքին մէջ կենսական է. ան ժողովուրդի մը ներքին ապրումներուն ու ձգտումներուն արտայայտութիւնն է, ուր մշակոյթը ու միջավայրը բնականաբար իրենց կարեւոր դերը ունին: Ձեր հայրերու աւանդութիւնը պիտի բռնեցէք (2 Թես. 2. 15), կ'ըսէ Առաքեալը: Հետեւաբար, հարկ է ըլլալ աւանդապահ, սակայն ո'չ աւանդամոլ: Անհրաժեշտ է մեր աւանդութիւնները վերանորոգել ու ձեւաւորել այնպիսի կերպով, որ դառնան ներդաշնակ մեր ներկայ իրականութեան:

3) Անհրաժեշտ է հաւատարիմ մնալ համաքրիստոնեական արժեքներուն, սկզբունքներուն ու աւանդութիւններուն՝ միաժամանակ ըլլալով նախանձախնդիր Հայ Եկեղեցւոյ իւրայատուկ ինքնութեան: Այս սկզբունքէն մեկնելով՝ իրենց ուղղութիւնը առած են մեր Եկեղեցւոյ բոլոր բարեկարգչական շարժումները, մեր հայրերու որդեգրած դաւանաբանական կեցուածքները եւ ծաւալած աստուածաբանական երկխօսութիւնները օտար Եկեղեցիներուն հետ: Ներկայ ժամանակներուն, երբ մեր Եկեղեցին ամենօրեայ յարաբերութեան մէջ է այլ Եկեղեցիներու հետ, անհրաժեշտ է որ մեր Եկեղեցւոյ ծիսական, աստուածաբանական ու դաւանաբանական մարգերուն առնչուած իւրայատկութիւնները պահենք անխախտ՝ միաժամանակ ամուր պահելով մեր համաքրիստոնեական արմատները:

4) Անհրաժեշտ է հաւատարիմ մնալ Հայ Եկեղեցւոյ ամբողջականութեան ու միութեան անվթար պահպանման՝ միաժամանակ ոչ հիմնական հարցերուն գծով զգայնութիւն ու ճկունութիւն ցուցաբերելով տեղական իւրայատուկ պայմաններուն նկատմամբ: Այսօր, երբ մէկը շոքազայի մեր Եկեղեցիներէն ներս, ինքզինք դէմ յանդիման պիտի գտնէ ակնյայտ հակասութիւններու ու տարբերութիւններու՝ յատկապէս արարողական ձեւերուն, ծիսական աւանդութիւններուն ու երաժշտական եղանակներուն կապուած: Արդարեւ, տասնամակներու ընթացքին իւրաքանչիւր Նուիրապետական Աթոռ, իւրաքանչիւր առաջնորդ, նոյնիսկ իւրաքանչիւր ծխատէր քահանայ իր «բարեկարգութիւն»ը կատարած է, եւ ընդհանրապէս պարագայական կերպով՝ այսպէս ստեղծելով խառնաշփոթ կացութիւն մեր Եկեղեցիէն ներս:

Շարունակութիւնը՝ էջ 6

Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու Եպիսկոպոսական ժողովը

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ

Սկիզբը՝ էջ 4

Այսօր հաճախ ենք խոսում հայ դպրոցի տկարացման, հայոց լեզվի իմացության նահանջի, հոգեւոր եւ ազգային կյանքում երիտասարդության ներգրավվածության նվազման մասին, որոնք ահագնացնում են ուժացման ընթացքները: Այսօր, երբ ունենք մեր անկախ պետականության քաջալերող իրականությունը, երբ ցեղասպանությունը վերապրած մեր ժողովրդի գավակները Սփյուռքում այլևս իբրեւ հարգված ու վստահելի քաղաքացի՝ իրենց արդար վաստակով ստեղծել են հոգեւոր եւ ազգային կառույցներ ու հաստատություններ, պիտի ջանանք ազգային-եկեղեցական մեր կյանքն ավելիով դարձնել հարազատ աշխարհի մեր գավակաց համար: Մեր Եկեղեցին առավել արդյունավետությամբ պիտի ծառայեցնի այդ հնարավորությունները մեր ժողովրդին հավատքով, ազգային գիտակցությամբ, մայրենի լեզվի հանդեպ նախանձախնդրությամբ կենսունակ պահելու գործին: Հոգեւոր արժեքներով ներշնչված ազգային կյանքի մեջ մեր ժողովուրդը, մասնավորապես՝ երիտասարդությունը, պիտի գտնի իր հարցերի պատասխանները, Աստծուն հավատարիմ իր անսայթաք ուղին, իր երջանկությունը եւ պիտի շարունակի ապրել ազգային ինքնությամբ՝ իր ուժերը, իր տեսիլքները բազմապատկելով մեր ազատ Հայրենիքից առնվող գործնական:

Եսամեկեղորդ դարը գիտատեխնիկական առաջընթացի ու նվաճումների հետ բերել է նաեւ բարոյական արժեքների անկում, մարդու իրավունքների ճիշտ ընկալման աղճատում, ազգային ինքնության եւ ընտա-



նեկան արժեքների խաթարում, որոնցից, ցավոք, գերծ չմնաց նաեւ ազգային մեր կյանքը, ինչպես Հայրենիքում, այնպես եւ՝ Սփյուռքում: Դարի հոգեզուրկ ընթացքներին, աշխարհայնացման, համահարթեցման վտանգներին պիտի կարողանանք դիմագրավել մեր ժողովրդի եւ հատկապես՝ երիտասարդության հոգում քաջարթուն պահելով սերը, վստահությունը հանդեպ մեր Սուրբ Եկեղեցին, նախանձախնդրությունը հանդեպ մեր հայրերի սուրբ հավատքը եւ ազգային ավանդները: Մեր Եկեղեցին, իբրեւ Տիրոջ շնորհաց առատաբեր աղբյուր, պիտի ոռոգի մեր կյանքի անդաստանները, հոգեւոր լույսով նորոգի ու պայծառացնի բարեպաշտ հոգին մեր ժողովրդի եւ հաստատուն պահի արդարության, ճշմարտության, մարդասիրության արժեքների մեջ, որոնցով պիտի բարգավաճեն, բարիով ու բարիքով լցվեն մեր երկիրն ու համայն հայ կյանքը: Մեր առաքելությունը մեկն է՝ հովվել եւ առաջնորդել մեր ժողովրդին դեպի փրկություն, պահպանել Աստծո եւ հայրենյաց սիրո մեջ, որպեսզի ապրենք եւ հարատեւենք իբրեւ Տիրոջ սեփական եւ ընտ-

րյալ ժողովուրդ ու Եկեղեցի:

Սիրելի՛ հոգեւոր հայրեր, ահա եկեղեցական ու լուրտում եւ ազգային կյանքում այն խնդիրները եւ գործունեության առաջնահերթությունները, որ ցանկացանք առանձնացնել, եւ որոնց վճռումն ու իրականացումը մեր Եկեղեցին Աստծո օրհնությամբ պիտի առաջնորդեն լիաշունչ եւ արգասավոր առաքելության: Մեր ժողովուրդը մեզ հետ է Հայ Եկեղեցու հանդեպ իր անխախտ

նվիրումով, Եկեղեցին գորացնելու ջերմ զգացումով, եւ մեր ջանքերն արձագանք պիտի գտնեն հավատքյալ մեր զավակների հոգում՝ աջակցություն բերելու պատրաստակամությամբ:

Առ Աստված աղոթքով հայցում ենք Սուրբ Հոգու առաջնորդությունը եպիսկոպոսաց ժողովի աշխատանքներին եւ բերում առաքյալի հորդորը. «Եղբայրներ, ինչ որ ճշմարտությամբ է, ինչ որ՝ արդարությամբ, ինչ որ՝ սրբությամբ, ինչ որ՝ սիրով, ... այն խորհեցեք: ... Եվ խաղաղության Աստվածը թող լինի ձեզ հետ» (Փիլիպ. 4. 8-9):

Թող Տերը խաղաղություն պարգևի աշխարհին, պատերազմական դժվարություններ կրող ժողովուրդներին, իր բարի հայացքի ներքո անխռով պահի Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկիրն ու աշխարհասփյուռ մեր ժողովրդին, անսասան՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին՝ Նվիրապետական Աթոռներով ու սպասավորներով՝ պարգևելով հոգեւոր առաջընթաց ու բարօրություն:

Բարի ընթացք մեր աշխատանքներին:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ

Սկիզբը՝ էջ 5

Հայ Եկեղեցույ աշխարհացրիւ ներկայութիւնը եւս իր ժխտական հետեւանքները ունեցած է այս ուղղութեամբ: Արդ, անհրաժեշտ է կատարել յստակեցում, սրբագրում, դասաւորում ու գտնում՝ մեր Եկեղեցույ ամբողջականութիւնը վերաշէտող:

Յաջողութեան ճամբան կը սկսի ինքնաքննադատութեամբ: Մեր վերքերը ճիշդ տեսնելու եւ ցաւերը ճիշդ զգալու քաջութիւնը պէտք է ունենանք: Սակայն, սիրելի՛ սրբազան հայրեր, միաժամանակ պէտք է ըլլալ իրապաշտ: Հայ Եկեղեցույ ծիսական կեանքէն ներս խոր արմատներ նետած թերութիւններու սրբագրումը, ինչպէս նաեւ հիկնի վերանորոգումը կը կարօտի երկար, տքնաջան ու հետեւողական աշխատանքի: Եպիսկոպոսաց ժողովին կողմէ



կատարուելիք աշխատանքէն շատ աւելի դժուար պիտի ըլլայ առնուած որոշումներուն գործադրութիւնը թեմական եւ ծխային մակարդակներու վրայ: Հետեւաբար, դիրին աշխատանքի չէ, որ կը ձեռնարկենք: Պէտք է սակայն յուսալքուինք: Սուրբ Հոգւոյ ներգործութեամբ զօրացած, մեր Եկեղեցույ առաքելութեան նկատմամբ մեր ունեցած յանձնառութեամբ ամրապնդուած ու եղբայրական ջերմ սիրով գօտեպնդուած միա՛նաբար պիտի լծուինք այս նուիրական աշխատանքին՝ վերանորոգ հաւատքով եւ բարձրագոյն աստիճանի պատասխանատուութեամբ: Այս կը սպասեմ մեզմէ մեր Եկեղեցին:

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Եպիսկոպոսաց ժողովը



Սկիզբը՝ էջ 3

Սեպտեմբերի 24-ի նիստերին եպիսկոպոսաց դասը քննարկեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցում սրբադասման ավանդության վերականգնման հարցը եւ այդ շրջագծում Հայոց ցեղասպանության զոհերի սրբադասման խնդիրը: Այս առնչությամբ սրբադասման հանձնախմբի կատարած աշխատանքների եւ ուսումնասիրությունների արդյունքների մասին զեկույցներ ներկայացրին հանձնախմբի համաատենապետներ Սեպուհ արք. Սարգսյանը եւ Եզնիկ արք. Պետրոսյանը:

Զեկույցների քննարկման արդյունքում Հայոց ցեղասպանության զոհերի սրբադասման գործընթացի առնչությամբ եպիսկոպոսաց ժողովը որոշեց.

ա. որդեգրել Հայոց ցեղասպանության նահատակների հա-

վաքական սրբադասման սկզբունքը:

բ. հանձնարարել սրբադասման հանձնախմբին՝ շարունակել նահատակների անհատական եւ խմբային սրբադասման ուսումնասիրությունը՝ եպիսկոպոսաց առաջիկա ժողովներին ներկայացնելու համար:

գ. հանձնարարել սրբադասման հանձնախմբին մշակել սրբադասման կանոնակարգը եւ արարողակարգը՝ եպիսկոպոսաց առաջիկա ժողովին ներկայացնելու համար:

Սեպտեմբերի 25-26-ի նիստերին եպիսկոպոսաց ժողովի մասնակիցները քննության առան Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու առաջին երկու խորհուրդների՝ Ս. Մկրտության եւ Դրոշմի առնչությամբ ծիսական հանձնախմբի կողմից կատար-

ված աշխատանքները: Զեկույցներ ներկայացրին հանձնախմբի համաատենապետ Արշակ Եպս Խաչատրյանը, հանձնախմբի անդամներ Միքայել Եպս Աջապահյանը եւ Վահան Եպս Հովհաննիսյանը: Համակողմանի քննարկման արդյունքում ժողովն ընդունեց Ս. Մկրտության եւ Դրոշմի խորհուրդների միօրինակ բնագիր: Զննարկման նյութ դարձան Ս. Մկրտության խորհրդի հետ առնչված հարցերի ուղեցույցը եւ Ս. Մկրտության խորհրդի խրատական-ուսուցողական ձեռնարկը, որոնց առնչությամբ ծիսական հանձնախմբին հանձնարարվեց շարունակել լրամշակման աշխատանքները: Կարեւորությամբ քննարկվեցին նաեւ Հայ Եկեղեցու ծիսական լեզվի խնդիրը եւ այլ հարցեր, որոնց վերաբերյալ անհրաժեշտություն նկատվեց հավելյալ ուսումնասիրություններին:

Սեպտեմբերի 27-ի նիստերը նվիրված էին Հայ Եկեղեցու այժմեական մարտահրավերներին: Այս մասին զեկույցներով հանդես եկան Օշական արք. Զոյլյանը եւ Բագրատ Եպս Գալստայանը: Զննարկելով ներկայացված մարտահրավերները, որոնք վերաբերում էին Եկեղեցու ծիսական,

քարոզչական կյանքին եւ կրթադաստիարակչական ու սոցիալական առաքելությանն ու հայապահպանության խնդիրներին՝ ժողովականները որոշեցին դրանք առաջնահերթության սկզբունքով համապարփակ քննության առարկա դարձնել եպիսկոպոսաց առաջիկա ժողովներին:

Եպիսկոպոսաց ժողովն արդյունքների ամփոփման հանգրվանին մտահոգությամբ անդրադարձավ նաեւ մեր ժողովրդի ազգային, եկեղեցական կյանքում առկա ընկերային, տնտեսական, ժողովրդագրական եւ տարաբնույթ այլ մարտահրավերներին ու դժվարություններին: Նշյալ մարտահրավերներին ու հիմնախնդիրներին ընդառաջ՝ եպիսկոպոսաց դասը, ելնելով Հայ Առաքելական Եկեղեցու ծառայական ոգուց, օրհնությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի, որոշեց հաստատել հիմնադրամ՝ Հայաստանի, Արցախի եւ սիրիահայության կարիքավոր զավակներին աջակցություն ցուցաբերելու համար: Հիմնադրամի գործունեության մեկնարկի համար հաստատվեց երկու միլիոն ԱՄՆ դոլարի նախնական դրամագումար, իսկ հիմնադրամի ընթացիկ աշխա-

տանքների կազմակերպման համար ստեղծվեց հատուկ հանձնախումբ:

Ժողովի ավարտին եպիսկոպոսաց դասը գոհունակությամբ արձանագրեց ժողովի արդյունավետ ընթացքը եւ երախտագիտություն հայտնեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին՝ Մայր Աթոռում եպիսկոպոսաց եղբայրական սիրով համախմբման հնարավորության համար: Ժողովականները կարելի չէր նկատեցին եպիսկոպոսաց ժողովների պարբերաբար գումարումը՝ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու առջեւ ծառացած զանազան մարտահրավերներին ու հայ ժողովրդին հուզող հարցերին անդրադառնալու եւ դրանց առնչությամբ Հայ Եկեղեցու տեսակետներն ու մոտեցումները ճշգրտելու նպատակով:

Եպիսկոպոսաց հաջորդ ժողովը որոշվեց գումարել 2014 թվականի աշնանը:

Ժողովը փակվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի օրհնության ու գնահատանքի խոսքով եւ աղոթքով:

ԴԻԱՆ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԺՈՂՈՎԻ

Ա եպատմերի 16-ին Ն. Ս. Օ. Տ. Տ Գա-րեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Յայոց Կաթողիկոսը մեկնեց Մոսկվա, ուր սեպտեմբերի 17-ին Նորին Սրբության հանդիսապետությանը օծվեց Նոր Նախիջեանի եւ Ռուսաստանի հայոց թեմի Նորակառույց առաջնորդանիստ եկեղեցին, եւ կատարվեց առաջնորդանիստ եկեղեցական համալիրի բացման արարողությունը:

Նոր Նախիջեանի եւ Ռուսաստանի հայոց թեմի կյանքում պատմական այս իրադարձությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, առաջնորդանիստ համալիրի կառուցման բարերարները, Հայ Եկեղեցու աշխարհասփյուռ թեմերից Մոսկվա ժամանած թեմակալ առաջնորդներ եւ բարերար հայորդիներ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, ՀՀ պետական այրեր, գիտության, կրթության մշակներ, մշակույթի անվանի գործիչներ, Ռուսաստանի Դաշնության եւ մայրաքաղաք Մոսկվայի իշխանությունների ներկայացուցիչներ:

Արարողության իր մասնակցությունը բերեց նաեւ Նորին Սրբություն Կիրիլ Ա Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարքը՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցու հոգեւորականության ուղեկցությամբ:

Հանդիսավոր արարողությունն սկսվեց հանդիսավոր թափորով, որով Ամենայն Յայոց Կաթողիկոսը «Խորհուրդ խորին» շարականի երգեցողության ներքո առաջնորդարանից եպիսկոպոսների, Մայր Աթոռի միաբանների եւ թեմի քահանայից դասի կողմից առաջնորդվեց դեպի Նորակառույց սուրբ տաճար: Օրինելով ներկա բազմահազար հայորդիներին՝ Վեհափառ Հայրապետը բարձրացավ խորան, ուր սկսվեց շքեղակառույց առաջնորդանիստի օծման արարողությունը:

Սրբազան արարողության ընթացքում սաղմոսերգության ներքո եկեղեցականները ջրով եւ գինով լվացին տաճարի սուրբ Սեղանը եւ օծվելիք սյուները, ապա Յայոց Հայրապետը սրբալույս մյուռնով օծեց եկեղեցու սուրբ Սեղանը, իսկ սրբազան հայրերը՝ չորս ավետարանիչների անունով խորանի սյուները եւ եկեղեցու մատցյալ տասը սյուները: Օրինելով Նորակառույց եկեղեցին՝ Նորին Սրբությունն այն անվանեց Ս. Պայծառակերպություն եկեղեցի:

Օծման արարողության ավարտին հորան բարձրացվեց Մայր Աթոռում պահվող Տիրոջ խաչափայտի մասունքից մի նշխար՝ ամփոփված մասունքառան-խաչի մեջ, որն Ամենայն Յայոց Կաթողիկոսի կողմից այս նշանակալի առիթով ընծայաբերվեց Նորած Ս. Պայծառակերպություն եկեղեցուն՝ ի գորացումն թեմի հավատացելոց հոգեւոր կյանքի: Եկեղեցուն նվիրաբերվեց նաեւ գեղեցկագարդ կանթեղ:

Ս. Սեղանի վրա ս. խաչի մասունքի գետեղումից հետո Նոր Նախիջեանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս



եպա Ներսիսյանն անդրադարձավ այս եկեղեցու կարեւորությանը ռուսահայության կյանքում, ապա թեմի թեմական խորհրդի, հոգեւորականաց դասի եւ բարեպաշտ հայորդիների անունից շնորհակալություն հայտնեց Ամենայն Յայոց Կաթողիկոսին՝ եկեղեցու կառուցման ողջ ընթացքում Ս. Էջմիածնի եւ Յայոց Հայրապետի կողմից ցուցաբեր-



րապետ Հովհան Մանդակունի եկեղեցին կոչում է երկինք երկրի վրա, որտեղ մենք հաղորդակցվում ենք երկնայիններին, մարմնավոր իրողություններից բարձրանում դեպի հոգեւորը, միավորվում ի Զրիստոս՝ կազմելով հավատացելոց հավաքականությունը, Զրիստոսի խորհրդական մարմինը: Տաճարը քարեղեն մանրակերտն է մեր այդ հոգեւոր

ւոր նորոգության, ազնիվ ու արդար գործերի: Եկեղեցին նաեւ հրաշագեղ պատկերաքանդակներով, որոնք որպես մեր դարավոր պատմության մաքառումների ու հաղթանակների էջեր՝ արձանագրված նվիրական աղոթավարի սրբատաշ քարերին, պիտի հանապազ քաջալերի ձեզ ազգային ոգու, եկեղեցանվիրումի ու հայրենասիրության մեջ: Այս պերճաշուք

Ամենայն Յայոց Կաթողիկոսի ձեռամբ օծվեց Մոսկվայի Նորակառույց առաջնորդանիստ Սուրբ Պայծառակերպություն եկեղեցին

վող մշտական գորակցության եւ հրաշակերտ տաճարի օծման համար: Այնուհետեւ հայրապետական իր օրհնությունը ներկա բարեպաշտ ժողովրդին բերեց Ամենայն Յայոց Կաթողիկոսը՝ առ Բարձրյալն Աստված գոհաբանությամբ անդրադառնալով ռուսահայոց հոգեւոր կյանքում կարեւոր այս հանգրվանի նշանակությանը: «...Հոգեւոր բերկրանքի օր է այսօր ամենքիս համար, քանզի Ռուսաստանի մայրաքաղաք Մոսկվայում ռուսաստանաբնակ բարեպաշտ հայորդյաց ազնիվ, առատաձեռն նվիրատու-

հավաքականության, որի մասին առաքյալն ասում է. «Օտար եւ պանդուխտ չեք, այլ սրբերին քաղաքակիցներ եւ Աստծո ընտանիք, կառուցված առաքյալների եւ մարգարեների հիմքի վրա, որի անկյունաքարը Զրիստոս Հիստուսն է» (Եփ. 2.19-20)»,- նշեց Վեհափառ Հայրապետը:

Խոսելով հայ ժողովրդի եւ Ռուսաստանի հայ համայնքի կյանքում եկեղեցու առանձնահատուկ առաքելության մասին՝ Նորին Սրբությունը մասնավորապես ասաց. «Աշխարհասփյուռ մեր ժողովրդի համար կենսական նշա-

պատկերաքանդակները այլազգի մեր եղբայրներին պիտի ծանոթացնեն հայոց պատմության հիշարժան դրվագներին, վասն հավատի եւ վասն հայրենյաց պայքարներին, մեր ժողովրդի՝ երկրից երկինք ձգվող փառավոր գործերին, որոնց շարունակողներն այսօր դուք եք՝ ձեր հավատավոր կյանքով ու ընթացքով»:

Նորին Սրբությունը հորդորեց հայորդիներին գորավոր պահել իրենց հավատքը, եկեղեցասիրության եւ ազգասիրության ոգին, միշտ հաստատուն քայլերով բանուկ պահել ճանապարհը



վություններով շքեղակառույց հանել է Նոր աղոթավայր՝ առաջնորդանիստ հողակերտ համալիրով: Եկեղեցին կոչեցինք Պայծառակերպություն, քանզի այն Նոր պայծառություն պիտի բերի ռուսահայ համայնքին: Այստեղ հավատացյալ Մեր զավակները լեռան վրա պայծառակերպված Տիրոջ նմանությամբ պիտի փոխակերպվեն ու պայծառակերպվեն եկեղեցու լույս խորանից հեղվող երկնային շնորհներով, լցվեն հոգեւոր նորոգությամբ ու գորությամբ: Արդարեւ, ընդհանրական եկեղեցու Հայրապետներից սբ Հովհան Ոսկեբերանը Եսայու մարգարեության մեկնության մեջ եկեղեցին նմանեցնում է բարձր լեռան, որը դիմակայում է ջարի ամեն հարձակման, իսկ մեր եկեղեցու սբ Հայ-

նակություն ունի եկեղեցու միավորող ու պայծառակերպող սրբարար ներգործությունը: Հայ ժողովրդի պանդուխտ զավակները Մայր Հայրենիքից հեռու Մայր Եկեղեցու գրկում համախմբվեցին ու հոգեւոր արժեքներով գորանալով եւ եղբայր ժողովուրդների ու պետությունների սատարումով ու օգնությամբ, ինչպես այստեղ՝ Ռուսաստանի Դաշնությունում, կազմակերպեցին ազգային-եկեղեցական իրենց կյանքը եւ հաստատուն պահեցին հավատքն ու ազգային միաբանության ոգին:

Սիրելի՛ հավատավոր զավակներ Մեր, առաջնորդանիստ այս հողակերտ եկեղեցին Մենք օծեցինք հավատով, որ այն Նոր լիցք եւ վերելք է բերելու համայնքային ձեր կյանքում՝ հրավիրելով աղոթքի, աստվածապաշտության, հոգե-

դեպի այս սուրբ եկեղեցին, որտեղ բաշխվող Տիրոջ շնորհներն ու գորությունը ուժ եւ կորով պիտի տան ամենքին՝ սրտերում կրելու լուսեղեն պատգամները մեր Տեր Հիսուս Զրիստոսի, ապրելու աստվածախաճ ընթացքով, հաղթահարելու մեր ժամանակների մարտահրավերները եւ մշտապես հավատարիմ մնալու հայրենական ժառանգությանն ու սրբազան արժեքներին:

Բերկաշատ այս առիթով Վեհափառ Հայրապետը մասնավոր երախտագիտություն հայտնեց Մոսկվայի եւ համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքին, ինչպես նաեւ Ռուսաստանի Դաշնության եւ Մոսկվայի քաղաքային իշխանություններին՝ եղբայրական սիրով ռուսահայության հոգեւոր-ազգային կյանքի գորացմանն ու առա-

ջընթացին սատարելու համար:

Նորին Սրբությունն իր օրհնությունն ու բարձր գնահատանքը բերեց եկեղեցու բարերարներին՝ Յայոց Եկեղեցու հանդեպ իրենց որդիական սիրո եւ նախանձախնդրության համար, ինչպես նաեւ թեմական եւ եկեղեցական համայնքային վարչությանց բարեխան անդամներին, հոգեւոր դասին եւ եկեղեցու կերտմանը կարեւոր մասնակցություն բերած բոլոր անձանց:

Գեղեցկակերտ եկեղեցու օծման առիթով Ամենայն Յայոց Կաթողիկոսն իր մասնավոր գնահատանքը հայտնեց Նոր Նախիջեանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս սրբազանին եւ ի գնահատություն նրա նվիրյալ եւ նախանձախնդիր ծառայության՝ շնորհեց արքեպիսկոպոսական կաթողիկոսի եւ նրա կուրծքը զարդարեց եպիսկոպոսական պանակեով:

Վերջում Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ Բարձրյալն Աստծո օրհնությամբ շենանան եւ զորանան Հայաստանն ու Ռուսաստանի Դաշնությունը, Տիրոջ հոգեւոր լույսով պայծառանան երկու եկեղեցիները, եւ հավետ ամուր լինի հայ եւ ռուս եղբայր ժողովուրդների դարավոր բարեկամությունը:

Խոսքի ավարտին Նորին Սրբությունը Կիրիլ Պատրիարքին, ՀՀ նախագահին եւ ԼՂՀ նախագահին ընծայեց եկեղեցու օծման առիթով հրատարակված Գրիգոր Տաթեւացու ձեռագիր Ս. Ավետարանի ֆաբսիմիլային օրհնակը:

Այս ուրախալի առիթով իր շնորհավորանքի եւ օրհնության խոսքն ասաց նաեւ Մոսկվայի եւ համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքը: Նորին Սրբությունն անդրադարձավ հայ եւ ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությանը, ինչպես նաեւ եկեղեցաշինության մեծ կարեւորությանը՝ ի խնդիր աղոթական ոգու, Աստված-մարդ հարաբերությունների գորացման եւ հոգեւոր արժեքների ամրապնդման:

Ամենայն Յայոց Հայրապետի կողմից թեմի համար կարեւոր այս իրադարձության առիթով նաեւ վաթսուներեք անձանց՝ իբրեւ Ս. Պայծառակերպություն առաջնորդանիստ եկեղեցու բարերարների, սրբատառ կոնդակներով շնորհվեցին Հայ Եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» եւ «Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշաններ: Ամենայն Յայոց Կաթողիկոսի ձեռամբ շքանշաններ հանձնվեցին գործարար Սամվել Կարապետյանին եւ Վլադիմիր Յակունինին:

Եկեղեցու օծման արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը եւ արարողությանը մասնակից հայորդիներն ու հյուրերն այցելեցին առաջնորդարանի դահլիճում բացված «Հայերը Մոսկվայում. պատմական ուղի» ցուցահանդեսը, շրջեցին Նորաբաց համալիրի կառույցներում: Վերջում Ամենայն Յայոց Կաթողիկոսը եւ Մոսկվայի եւ համայն Ռուսիո Պատրիարքը կատարեցին բացումը համալիրի տարածքում գտնվող Սիրո եւ եղբայրության հուշարձանի՝ նվիրված հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամությանը:

Խորհրդակցություն ժնեւում՝ Սիրիայի խնդիրների վերաբերյալ

Սեպտեմբերի 18-19-ը Ժնեւի Բոսեի Էկումենիկ դպրոցում տեղի ունեցավ խորհրդակցություն Սիրիայի խնդիրների վերաբերյալ՝ կազմակերպված եկեղեցիների համաշխարհային խորհրդի կողմից, որին իրենց մասնակցությունը բերեցին ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Գեր-

մանիայի, Անգլիայի, Սիրիայի եւ Իրաքի ներկայացուցիչները: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից խորհրդակցությանը մասնակցեցին ԵՀԿ Գործադիր կոմիտեի անդամ Վիգեն արք. Այբազյանը եւ Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Արմաշ եպս Նալբանդյանը:

Խորհրդակցության արդյունքում ժողովականներն արձանագրեցին, որ Սիրիայի ճգնաժամը չի կարող լուծվել ռազմական ճանապարհով, եւ հարկ է, որ միջազգային հանրությունը պատասխանատվություն ստանձնի բռնությունների կասեցման համար՝ ձեռնարկելով խա-

ղաղության հաստատմանն ուղղված միջոցներ:

Հանդիպման ժամանակ նաեւ կոչ արվեց եկեղեցիների առաջնորդներին՝ միջնորդել պետությունների ղեկավարներին՝ շանքեր գործադրելու Սիրիայում խաղաղության վերահաստատման համար:

ղաղության հաստատմանն ուղղված միջոցներ:

Հանդիպման ժամանակ նաեւ կոչ արվեց եկեղեցիների առաջնորդներին՝ միջնորդել պետությունների ղեկավարներին՝ շանքեր գործադրելու Սիրիայում խաղաղության վերահաստատման համար:

Խաղաղության աղոթք եւ հոգեհանգիստ՝ Սիրիայում զոհված քրիստոնյաների համար

Սեպտեմբերի 22-ին Սբ Էջմիածնի Մայր տաճարում մատուցված Պատարագից հետո, նախագահությամբ Ամենայն Յայնոց Կաթողիկոսի, կատարվեց խաղաղության աղոթք եւ հոգեհանգստյան պաշտոն՝ Սիրիայի եւ Սիրիայում զոհված բազում քրիստոնյաների համար:

«Մենք հորդոր եւ հրավեր ենք բերում ձեզ, սիրելի՛ հայորդիներ, որ ըստ ամենայնի զորակցություն բերեք կարիքի մեջ գտնվող ձեր եղբայրներին ու քույրերին: Մենք հրավիրում ենք ձեզ նաեւ առատացնելու ձեր մշտական աղոթքը, որովհետեւ ձեր աղոթքը մխիթարություն պիտի պարգևի նրանց, միա-



Մինչ արարողության սկսվելը, ներկա գտնվող հավատացյալներին իր խոսքն ուղղեց Ամենայն Յայնոց Յայրապետը: Նորին Սրբությունը մասնավորաբար ընդգծեց, որ Սիրիան հայ ժողովրդի համար հարազատ երկիր է, ուր հայ ժողովրդի բազում զավակներ հայրուրամյակներ առաջ եւ հատկապես Յայնոց ցեղասպանությունից հետո ապաստան են գտել եւ հնարավորություն ստացել եկեղեցիների կամարների ներքո ազատորեն կազմակերպելու իրենց հոգեւոր-մշակութային, իրենց պայծառ ու շեն կյանքը:

Խոսելով ներկայիս Սիրիայում ստեղծված դժվարին կացության եւ սիրիահայ համայնքի կարիքների մասին՝ Ամենայն Յայնոց Կաթողիկոսն ասաց.

ժամանակ պիտի զորացնի նրանց հոգին՝ հաղթահարելու այդ դժվարությունները եւ խաղաղ ժամանակների հույսով ապրելու, որպեսզի կարողանան պահպանել այն ժառանգությունը, որ մեր հայրերը կերտել են Սիրիայի օրինյալ երկրի մեջ»:

Մաղթելով, որ Բարձրյալ Տերն Իր սիրո ու ողորմության մեջ պահի համայն աշխարհը եւ ողջ մարդկությունը՝ Նորին Սրբությունն աղոթեց նաեւ հակամարտության ընթացքում զոհված բազում քրիստոնյաների համար՝ միաժամանակ հայցելով, որ Աստված երկնային լուսեղեն հարկերում ընդունի նրանց հոգիները եւ մխիթարություն պարգևի նրանց հարազատներին ու մերձավորներին:

Մայր Աթոռում բացվեց «Կառլ եւ Էմմա Սողոյաններ» ձեռագիր մատյանների ցուցասրահը

Սեպտեմբերի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Ալեք եւ Մարի Մանուկյան» գանձատանը, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Յայնոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ «Կառլ եւ Էմմա Սողոյաններ» ձեռագիր մատյանների ցուցասրահի բացման արարողությունը:

Յայ Եկեղեցու բարերար տիկին Էմմա Սողոյանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին է ընծայաբերել քսաներկու ձեռագիր մատյան եւ հայերեն առաջին տպագիր Աստվածաշունչը՝ ի հիշատակ իր հոգեւորական ամուսին Կառլ Սողոյանի:

Տերունական աղոթքից եւ շարականի եզեցողությունից հետո տիկին Սողոյանը հատեց ցուցասրահի մուտքի ժապավենը, որից հետո Վեհափառ Յայրապետի գլխավորությամբ իյուրերը մուտք գործեցին նորաբաց ցուցասրահ:

Այս առիթով ներկաներին ողջունեց Մայր Աթոռի թանգարանների եւ արխիվի տնօրեն Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը: «Այսօր այս ձեռագրերը ցուցադրության են դրվում Սուրբ Էջմիածնում, որպեսզի ամեն ձեռագիր՝ որպես սրբություն եւ անբարբառ բարեխոս, շարունակի բարեխոսել այս ընտանիքի համար եւ մանավանդ Կառլ Սողոյանի հոգու հանգստության եւ տիկին Սողոյանի կենաց արեւ շատության համար», - իր խոսքում



նշեց տեր Ասողիկը՝ երախտագիտություն հայտնելով նաեւ Վեհափառ Յայրապետին՝ հայ հոգեւոր մշակույթի աշխարհասփյուռ նշխարները խնամքով հավաքելու եւ Մայր Աթոռում մեկտեղելու համար:

Այնուհետեւ իր ջերմ ապրումներն ու զգացումները ներկաներին փոխանցեց նաեւ տիկին Էմմա Սողոյանը:

Արարողության ավարտին տիկին Էմմա Սողոյանին իր օրհնությունը բերեց Ամենայն Յայնոց Կաթողիկոսը: «Գոհունակություն ենք հայտնում, որ Տերը մեզ պարգևում է այսպիսի ազնվահոգի զավակներ, ովքեր իրենց կյանքի ընթացքում ջանասիրությամբ հավաքած մեր հոգեւոր արժեքները

րը պատրաստական ոգով եւ սիրով ընծայաբերում են ազգային հաստատություններին», - ասաց Յայնոց Յայրապետը՝ ընդգծելով, որ այլեւս իրականությունն է դարձել բարերար հայորդու բաղձանքը, եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նվիրական հարկի ներքո ինչպես հայ, այնպես էլ օտար հանրությանը պատճառորեն ներկայացվելու եւ տասնյակ տարիների ընթացքում նրա կողմից հավաքված ձեռագրերը:

Վերստին իր գնահատանքը հայտնելով Սողոյան ընտանիքին՝ Ամենայն Յայնոց Կաթողիկոսը մաղթեց, որ Տիրոջ օրհնությունը, ողորմությունն ու առատ շնորհները հեղվեն ազգային մեր կյանքում եւ հովանի լինեն մեր ժողովրդին՝ առաջնորդելով դեպի խաղաղ եւ բարօր կյանքի օրեր:

Նորաբաց սրահում, բացի ընծայված ձեռագրամատյաններից, ցուցադրվում են նաեւ որոշ բացառիկ փաստաթղթեր Մայր Աթոռի արխիվից, որոնց թվում են նաեւ Կ. Պոլսի Յայնոց Պատրիարք Տ. Չավեն արք. Եղիայանի գաղտնի փաստաթղթերը՝ կապված Յայնոց ցեղասպանության հետ, ինչպես նաեւ վերջինիս գրությունը՝ ուղղված Տ. Տ. Գեւորգ Ե Ամենայն Յայնոց Կաթողիկոսին՝ ապրիլի 24-ը Յայնոց ցեղասպանության հիշատակի օր հաստատելու վերաբերյալ:



«Ս. Ներսես Շնորհալի» շքանշան՝ Բրազիլիայի հայոց թեմի առաջնորդին

Սեպտեմբերի 30-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում «Ալեք եւ Մարի Մանուկյան» գանձատան «Կառլ եւ Էմմա Սողոյաններ» ձեռագիր մատյանների ցուցասրահի բացման արարողության ժամանակ տեղի ունեցավ շքանշանի հանձնման մասնավոր արարողություն: Յայրապետական սրբատառ կոնդակով Յայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվով բարձր շքանշան շնորհվեց Բրազիլիայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Տաթև արք. Ղարիբյանին՝ քահանայազորության հիսնամյա հոբելյանի առիթով:

«Սիրելի՛ Սրբազան, շուրջ հինգ տասնամյակ, որպես հոգեւոր սպասավոր քրիստոսասեր մեր ժողովրդի, Ձեր կարողություններն ի սպաս եք դնում հանուն մեր Սուրբ Եկեղեցու աստվածաշնորհ առաքելության արդյունավորման: Այսօր ուրախ ենք արձանագրելու, որ նախնայաց սուրբ հավատքն ու ավետարանական ճշմարտությունները քարոզելու աստվածաշնորհ գործին ծառայել եք հավատարմորեն, ջերմեռանդությամբ եւ ամենայն նվիրվածությամբ:



Չնահատարժան է հոգեւոր ծառայության Ձեր ուղին: Ավարտելով երուսաղեմի Սրբոց Յակոբյանց վարժարանի ուսումնառության շրջանը եւ քահանայական ձեռնադրություն ստանալով ամենապատիվ Տ. Եղիշե արք. Տերտերյան Պատրիարքի կողմից՝ ծառայության անցք ժառանգավորաց վարժարանում՝ որպես փոխտեսուլ՝ անձնվեր ջանքեր բերելով հօգուտ հո-

գեւորականաց երիտասարդ սերնդի պատրաստության պատասխանատու գործի: Ապա 1966 թվականից սկսյալ, շուրջ մեկեկես տասնամյակ սպասավորություն իրականացնելով Կորդոբայում, անխնջ քարոզչությամբ ու անձնդիր ծառայությամբ զորացյալ պահեցիք մեր ժողովրդի գավակաց հավատը, եկեղեցասեր ու ազգասեր ոգին՝ առաջնորդելով առ Բարձրյալն

Աստված: Դուք երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Յայնոց Յայրապետի ձեռամբ արժանացաք եպիսկոպոսական ձեռնադրության եւ սուրբ օծման՝ արդեն իսկ կարգված լինելով իբրեւ առաջնորդ Բրազիլիայի հայոց թեմի, որտեղ Ձեր քաջալերանքով ու նախաձեռնությամբ իրագործվեցին բազում եկեղեցաշեն ու ազգանվեր ծրագրեր՝ կենդանի ու զորավոր պահելով հայորդյաց ազգային եւ եկեղեցական կյանքը, որի ականատեսն ենք եղել նաեւ մենք՝ հընթացս Յարավային Ամերիկա կատարած հովվապետական Մեր այցելությունների», - ասված է հայրապետական կոնդակում:

Շնորհավորելով Տաթև սրբազանին քահանայազորության հոբելյանի առիթով՝ Նորին Սրբությունը նրա կուրծքը զարդարեց «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշանով եւ մաղթեց քաջամոռջ ու արելւատ կենաց օրեր՝ Տիրոջ Սուրբ Աջի հովանու ներքո շարունակելու իր առաքելությունը՝ նորանոր եկեղեցաշեն ու ազգօգուտ հաջողություններ արձանագրելով ծառայության մեջ:

Իր հերթին Տաթև արքեպիսկո-

պոսն իր երախտագիտությունը հայտնեց Յայնոց Յովվապետին՝ բարձր գնահատանքի համար, եւ իր հավատարմությունն ու սերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Ամենայն Յայնոց Կաթողիկոսի հանդեպ: Պարգևաբաշխման արարողությունն ավարտվեց «Էջ Միածինն ի Զօրե» շարականի երգեցողությամբ:

Լրատվական կյուբերը՝
ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՐ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵԴԵԿԱՏՎԱԿԱՆ ՋԱՅԱՍՏԱՆԻ

ԵՐԻՍՏՈՆՅԱ ՋԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Երիտոնյա Յայաստան»

թերթի խմբագրություն

Համարի պատասխանատու՝

Նարե Սարգսյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝

qh@etchmiadzin.am

web կայք՝

kh-tert.livejournal.com

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր.

3.10.2013 թ.

Տպաքանակը՝ 2100

Գինը՝ 50 դրամ